ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Կապան
29.05.2018/ քսանիններորդ մայիսի երկու հազար տասնութ թվականի/

«Արդշինբանկ» ՓԲԸ / գտնվելու վայրի և_փ ոստային հասցեն «Հայաստանի Հանրապետություն,քաղաք Երևան,Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13/տասներեք/ վարչական շենք» գրանցման վկայական՝ թիվ 0394,գրանցման համարը՝83, գրանցման_ամսաթիվը,ամիսը,տարին՝ 25.02.2003թ/ քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական/,որի անունից համաձայն 18.05.2018թ/ տասնութը մայիսի երկու հազար տասնութ / թիվ 780 4306 - լիազորագրի հանդես է գալիս «Կապան » մասնաճյուղի կառավարիչ Տիգրան Սերոբի_Հակոբյանը՝ (անձնագիր՝ AF0741036-, տրված 041ի կողմից 23.07.2003,ծնված 14.07.1987թ–.) հաշվառված «Հայաստանի Հանրապետություն, ք.Կապան , Թումանյան շենք 1 ,բն 29 / այսուհետ՝ Վարձատու, մի կողմից, և

ՀՀ, ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ(իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,Նալբանդյան 13, պետական գրանցման վկայական 01Բ002246, գրանցման համարը՝286.180.06766 գրանցման ամսաթիվը՝01.02.2008թ/_,_ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի,_ որի անունից համաձայն 07.03.2018թ/յոթը մարտի_ երկու հազար տասնութ թվական/ տրված N ՄՄ/ՀրԱ/6336-18 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Կապանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արմենակ Գուրգենի Բեգլարյանը (անձնագիր՝AM 0350888 ,տրված 14.06.2011թ. 041ի կողմից), ծնված 04.02.1965թ հաշվառված «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ,ք. Կապան ,Գ. Նժդեհ շենք 20, բն8» հասցեում այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «Հայաստանի Հանրապետություն,Սյունիքի մարզ,քաղաք Կապան,Մելիք Ստեփանյան փողոց,շենք 3» հասցեում գտնվող_անշարժ գույքի 3րդ հարկից 155.02/մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական/քառակուսի մետր մակերեսով տարածք՝_դրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ համապատասխան մասով վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N 09022018-09-0014 տրված՝ 09.02.2018 թ.՝ Անշարժ գույքի պետական կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակի կողմից):

1.3. Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանման կողմից տրված N ՄՏ-25052018-09-0272 միասնական տեղեկանքով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2. Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2018թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար տասնութ թվականը) ներառյալ:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 265,750 (երկու հարյուր վաթսունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումար, ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ հաստատված էլեկտրոնային համակարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Վարձատուն պարտավոր է՝

4.1.1. Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2. Վարձակալած տարածքում ապահովել կոմունալ համակարգերի անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2. Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1. Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

4.2.3. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.4. ցանկացած ժամանակ լուծելու սույն պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3. Վարձակալը պարտավոր է՝

4.3.1. Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար պայմանագրով նախատեսված վարձավճարը:

4.3.2. Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4. Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1. Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.3. ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձակալն իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր պահանջով պահանջելու վճարել տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տանասրդական տոկոսի) չափով:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձման ժամկետը խախտելու դեպքում Վարձակալը իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.05 %-ի (զրո ամբողջ հինք հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ ,Ոչ բնակելի տարածքի վարձակալությանե պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի շրջանակներում ցանկացած ծանուցումները և փաստաթղթերի հանձնումը կարող է կատարվել Կողմերի ընտրությամբ առձեռն հանձնելու կամ փոստային ծառայության միջոցով սույն պայմանագրով սահմանված հասցեին պատվիրված նամակ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե, փաստաթղթի հանձնումը կատարվել է փոստային ծառայության միջոցով՝ սույն պայմանագրով Կողմին հայտնի վերջին հասցեին, այն համարվում է ստացված, իսկ ծանուցման

պարտավորությունը՝ պատշաճ կատարված, դրա ուղարկման օրվանից 7-րդ աշխատանքային օրը՝ անկախ դրա փաստացի ստացման հանգամանքից:

8.2. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսնօրյա ժամկետում պետական գրանցման:

8.3. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում:

8.5. Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

8.6. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.7. Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատու	Վարձակալ
«Արդշինբանկ»ՓԲԸ	ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության
ՀՀ ք Երևան Գր Լուսավորիչ 13	պետական ծառայության
2470036863230000	աշխատակազմ պետական
ՀՎՀՀ 02566492	կառավարչական հիմնարկ
«Կապան» մասնաճյուղ	ք.Երևան, Նալբանդյան 13
Մ Ստեփանյան 3	Հ/Հ 900011556355
Լիազորված անձ	ՀՎՀՀ 02505511
Կապան մասնաճյուղի	Լիազորված անձ Կապանի սոցիալական
Կառավարիչ	ապահովության տարածքային բաժնի
Տիգրան Հակոբյան	պետ Արմենակ Բեգլարյան

Նոտարական ակտի կոդ: 609-20180529-37-2563241
Նոտարական ակտի գաղտնագիր: JAJQG8

Երկու հազար տասնութ թվականի մայիսի քսանիններին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Գրանցված է սեղանամատյանում 1369

Գանձված է պետական տուրք՝ երեք հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Կամոյի Հայրապետյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

29.05.2018 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

քաղաք Կապան
29.10.2018թ. (Քսանիններորդ հոկտեմբերի երկու հազար տասնութ թվական)

«Արդշինբանկ» ՓԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ **«Վարձատու»**, ի դեմս Վարչության նախագահ Արտակ Անանյանի, որի անունից հանդես է գալիս «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Կապան» մասնաճյուղի կառավարիչ Տիգրան Հակոբյանի (Հայաստանի Հանրապետության անձնագիր՝ AS0270092, տրված 10.07.2018թ.) 041-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, ք Կապան Թումանյան շենք1 բն 29_»), ով գործում է համաձայն 25.10.2018թ. (քսանհինգը հոկտեմբերի երկու հազար տասնութ թվականի) տրված №780-12489 լիազորագրի, մի կողմից, և

ՀՀ, ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13, պետական գրանցման վկայական 01Բ002246, գրանցման համարը 286.180.06766, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին՝ 01.02.2008թ. (մեկը փետրվարի երկու հազար ութ թվականի), այսուհետ՝ **«Վարձակալ»**, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Վանիկ Բաբաջանյանի, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ ,Ծառայության աշխատակազմի Կապանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արմենակ Բեգլարյանը(Հայաստանի Հանրապետության անձնագիր՝ AM0350888, տրված 14.06.2011թ.), 041-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն,Ք. Կապան Գ.Նժդեհի շենք 20 բն.8» հասցեում, ով գործում է համաձայն 27.09.2018թ. (քսանյոթը սեպտեմբերի երկու հազար տասնութ թվական) տրված №ՎԲ/ՀՈԱ/23679-18 լիազորագրի, մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 29.05.2018թ. կնքված՝ «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մելիք Ստեփանյան փողոց, շենք 3» հասցեում գտնվող անշարժ գույքի 3-րդ հարկից 155.02 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս՝
(ա) Պայմանագրի 2.2 կետը փոփոխել, շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2.2. Սույն Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2020թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսան թվականը) ներառյալ:»
2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում նոտարական վավերացման և սույն համաձայնագրից բխող իրավունքների պետական գրանցման պահից:
4. Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման նոտարական կարգով, իսկ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում Վարձակալի կողմից՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից:
5. Սույն համաձայնագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից, և Կողմերին պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրության գործող նորմերը:
6. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 4 (չորս) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրին, մեկը վավերացնող նոտարական գրասենյակին, մեկը՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնին: Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:
7. Կողմերի ստորագրությունները.

ՎԱՐՁԱՏՈՒ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Լիազորված անձ՝ _ԿԱՊԱՆ մասնաճյուղի կառավարիչ
Տ. Հակոբյան_____

_____

ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ
Լիազորված անձ՝ Կապանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ
Արմենակ Բեգլարյան_____

_____

Նոտարական ակտի կոդ: 609-20181029-117-3162785
Նոտարական ակտի գաղտնագիր: V9UM6E

Երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի քսանիններին

Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 3305

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Կամոյի Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «26» Նոյեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ, ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Կապան Կապան ք. Մ. Ստեփանյան փողոց 3 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 29.05.2018թ. ս/մ 1369, Համաձայնագիր 29.05.2018 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 29.10.2018թ. ս/մ 3305 ք.Կապան

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	09-001-0607-0018-001-001	Բանկի շենք	155.02 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Դարիկո Գաբրիելյան

զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Նոտարական ակտի կոդ: 609-20181210-117-3313345
Նոտարական ակտի գաղտնագիր: 20X100

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՔԱՂԱՔ ԿԱՊԱՆ

Երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի տասնմեկին

Մենք՝ 29/05/2018թ. ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքում վավերացված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի կողմեր՝

ՎԱՐՁԱՏՈՒ՝ <<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> փակ բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13, գրանցման վկայական՝ թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25/02/2003թ., ի դեմս վարչության նախագահ ԱՐՏԱԿ ԿԼԻՄԵՆՏԻ ԱՆԱՆՅԱՆԻ, որի անունից 03/12/2018թ. տրված թիվ ԻԳ-780-14931 լիազորագրով հանդես եմ գալիս ես՝ ՀՀ քաղաքացի ՏԻԳՐԱՆ ՍԵՐՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆՍ, ծնված՝ 14/07/1987թ., ՀԾՀ՝ 2407870433, անձնագիր՝ AS0270092, տրված՝ 041-ի կողմից, 10/07/2018թ., հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Թումանյան փ., շ. 1, բնակարան 29

և *ՎԱՐՁԱԿԱԼ*՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ, ի դեմս «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» պետական մարմնի, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փ. 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ, որի անունից 26/11/2018թ. ՎԲ/ՀրԱ/2839818 լիազորագրով հանդես եմ գալիս ես՝ ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԲԵԳԼԱՐՅԱՆՍ, ծնված՝ 04/02/1965թ., ՀԾՀ՝ 1402650094, անձնագիր՝ AM0335088, տրված՝ 041-ի կողմից, 14/06/2011թ., հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. *Կապան*, Գ. Նժդեհ փ., շ. 20, բնակարան 8,

կողմերս փոխադարձ համաձայնությամբ որոշում ենք պայմանագրի 3.1 կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

3.1. Սկսած *երկու հազար տասնինը թվականի հունվարի մեկից* նշված պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կկազմի *155,020 /մեկ հարյուր հիսունհինգ հազար քսան/* ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր ծախսերը և հարկերը:

1.Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

2.Սույն համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարված են ,,*ՎԱՐՁԱՏՈՒԻ*,, կողմից:

3.Համաձայնագիրը կազմված և վավերացված է հայերեն լեզվով, հինգ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկ օրինակը պահվում է ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքում, մյուս օրինակները տրվում են կողմերին: Օրինակների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

4.Սույն համաձայնագիրը համարվում է 29/05/2018թ. ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքում վավերացված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի՝ գրանցում թիվ 1369, անբաժանելի մասը:

5.Սույն համաձայնագրից բխող իրավունքներն ենթակա են գրանցման ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումում:

ԿՈՂՄԵՐ՝

ՎԱՐՁԱՏՈՒ՝

<<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ, ի դեմս վարչության նախագահ

Ա. Կ. ԱՆԱՆՅԱՆԻ լիազորված անձ՝

ՎԱՐՁԱԿԱԼ՝

ՀՀ, ի դեմս «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Վ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ լիազորված անձ՝

Երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի տասնմեկին

Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 4122

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Կամոյի Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «19» Դեկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Կապան Կապան ք. Մ. Ստեփանյան փողոց 3 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 29.05.2018թ. ա/մ 1369, Համաձայնագիր 29.05.2018 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 29.10.2018թ. ա/մ 3305 ք.Կապան, Համաձայնագիր ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 11/12/2018թ.ա/մ 4122

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ESTATE CADASTRE

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	09-001-0607-0018-001-001	Բանկի շենք	155.02 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱԴԱՍՏՐ ESTATE CADASTRE

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արթուր Միրզոյան

գբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

.ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

29.05.2018 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

քաղաք Կապան

22.01.2021թ. /Քսաներկուսը Հունվարի երկու հազար քսանմեկ թվական /

«Արդշինբանկ» ՓԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ **«Վարձատու»**, ի դեմս «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Կապան» մասնաճյուղի Գարուշ Աբրահամյանի (Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր՝ AP0213019, տրված 23.05.2014թ. (քսանը մայիսի երկու հազար տասնչորս), 070-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Բերձոր, 7-րդ թղմ., տ. 12»), ով գործում է համաձայն 11.01.2021թ. (_տասնմեկը հունվարի երկու հազար քսանմեկ թվականի) տրված № ԻԳ780-66 լիազորագրի, մի կողմից, և

ՀՀ, ի դեմս Սոցիալական Ապահովության Ծառայության (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13, պետական գրանցման վկայական 01Բ002246, գրանցման համարը 286.180.06766, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին՝ 01.02.2008թ. (մեկը փետրվարի երկու հազար ութ թվականի), այսուհետ՝ **«Վարձակալ»**, ի դեմս գլխավոր քարտուղար Հարություն Գեվորգյանի, որի անունից հանդես է գալիս Կապանի տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Դանիելյանի (Հայաստանի Հանրապետության անձնագիր՝ ն/ք 000323402 տրված 12.06.2013թ. (_տասներկուսը հունիսի երկու հազար տասներեք թվական), 041-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, ք. Կապան Երկաթուղայինների փ 2.3 բն.10_»), ով գործում է համաձայն 30.11.2020թ. (երեսունը նոյեմբերի երկու հազար քսան թվականի) տրված № _Աթ/157-2020 լիազորագրի, մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 29.05.2018թ. կնքված՝ «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մելիք Ստեփանյան փողոց, շենք 3» հասցեում գտնվող անշարժ գույքի 3-րդ հարկից 155.02 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս՝
(ա) Պայմանագրի 2.2 կետը փոփոխել, շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2.2. Սույն Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2021թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսանմեկ թվականը) ներառյալ:»
2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման նոտարական կարգով, իսկ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում Վարձակալի կողմից՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից:
4. Սույն համաձայնագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից, և Կողմերին պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրության գործող նորմերը:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 4 (չորս) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրին, մեկը վավերացնող նոտարական գրասենյակին, մեկը՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնին: Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:
6. Կողմերի ստորագրությունները.

ՀԱՐՁԱՏՈՒ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Լիազորված անձ՝ Գարուշ Աբրահամյան

ՎԱՐՁԱԿԱԼ
Սոցիալական ապահովության Ծառայություն
Լիազորված անձ՝ Արմինե Դանիելյան

Գարուշ Աբրահամյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
566492 10900

Նոտարական ակտի կոդ: 609-20210122-117-4891151
Նոտարական ակտի գաղտնագիր: XTT2O6

Երկու հազար քսանմեկ թվականի հունվարի քսաներկուսին

Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ ՀՀ ,,Սյունիքի մարզ,, նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 140

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Կամոյի Հայրապետյան